ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ ԵՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 12-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

(5 նոյեմբերի, 2011 թ.)

Վեհափառ Տեր,

Լիահույս եմ, որ Աստված կլսի մեր աղոթքներն ու Հայոց Հայրապետին կշնորհի քաջառողջություն եւ ավյուն՝ իր հոտին իմաստաբար առաջնորդելու համար: Այսօր, առավել քան երբեւէ, Հայաստանն ու աշխարհասփյուռ հայությունը հոգեւոր սննդի կարիք ունի: Վստահ եմ, որ Ձեր աստվածատուր իմաստնությամբ կառաջնորդեք Ձեր հոտին քրիստոնեական արժեքները հայոց մեջ առավել ամուր արմատավորելու համար: Արագ փոփոխվող այս աշխարհում, տեղեկատվական մեծ հոսքերի, զարգացումների հետեւանքով այսօր համայն մարդկությունն ինքնության ճգնաժամ է ապրում: Ճգնաժամ, որը մեզ՝ հայերիս համար հաղթահարելի է, քանի որ դարեր շարունակ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եղել, մնում է եւ կմնա հայի ինքնության այն ուղենիշը, որն առաջնորդում է ամենքիս, աշխարհի որ ծեզում էլ որ մենք լինենք: Ձեր գահակալության տասներկու տարիները մեր պետության եւ եկեղեցու համար ունեցել են բացառիկ նշանակություն: Պետություն-եկեղեցի զորակցությունը որակապես նոր փուլ է թեւակոխել: Այս համագործակցության կարեւորագույն դրսեւորումներից մեկն այն է, որ դպրոցներում այսօր մենք դասավանդում ենք եկեղեցու պատմություն առարկան, որի նկատմամբ մեր աշակերտների հետաքրքրությունը բավականին մեծ է: Առավել խորացվել են եկեղեցի-բանակ փոխհարաբերությունները: Ընդլայնվել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր սպասավորների գործունեությունը Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերում, որոնց հպարտ քայլվածքին կարելի էր ականատես լինել անկախության քսանամյա հոբելյանին նվիրված զինվորական շքերթի ընթացքում: Այս ժամանակահատվածը եղել է բացառիկ նաեւ եկեղեցաշինության տեսանկյունից: Կառուցվել կամ նորոգության են ենթարկվել բազմաթիվ եկեղեցիներ, մատուռներ, եկեղեցական շինություններ: Հայրենիք-սփյուռք կապի պահպանության կարեւորագույն հիմնաքարը հանդիսանալով, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր շարունակում է մնալ մեր միլիոնավոր հավատացյալ զավակների հայապահպանության եւ կրոնապահպանության գրավականը: Ձեր հայրապետական այցելություններ-

ը հայկական գաղթօջախներ գոտեպնդում են Ձեր հոտին եւ նոր ուժ հաղորդում եկեղեցի-հավատացյալ հաղորդակցությանը: Զափազանց կարեւոր է նաեւ քարոզչության գործոնի ընդլայնումը Հայաստանի Հանրապետության մարզերում եւ հեռավոր գյուղերում, ինչը հնարավորություն է տալիս Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն լինել իր հոտին առավել մոտ եւ հասանելի: Սրա վառ ապացույցն է տեղերում եկեղեցիների նորոգությունը եւ հոգեւոր սպասավորների գործուղումը:

Վեհափառ Տեր,

Մեր աղոթքներն ենք հղում առ Ասպված, Ձեզ համար խնդրելով քաջառողջություն: Թող, որ Ամենափրկիչը պահպանի Ձեզ երեւելի եւ աներեւույթ փորձություններից՝ պարգեւելով երկար տարիների կյանք՝ ի բարօրություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ աշխարհասփյուռ հայության: